

Հայցվորի անունը  
Հայցվորի փոստային հասցեն  
Հայցվորի քաղաքը, նահանգը,  
փոստային ինդեքսը

## Ձեռ ՀՐԱՎԻՐՈՒՄ ԵՆՔ ԳՐԱՆՑՎԵԼ UI ONLINE<sup>SM</sup> ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Մույն ծանուցագրով Ձեզ տրվում է Զբաղվածության զարգացման վարչության (EDD) Հաճախորդի հաշվեհամար, որպեսզի կարողանաք գրանցվել UI Online<sup>SM</sup> համակարգում:

UI Online<sup>SM</sup>-ն արագ, հարմար և ապահով միջոց է Գործազրկության ապահովագրության (UI) հայցի և վճարման վերաբերյալ մանրամասն տեղեկությունները մուտք գործելու և Ձեր UI հայցն օրական 24 ժամ, շաբաթական 7 օր կառավարելու համար: Հիմա, երբ ներկայացրել եք Ձեր UI հայցը, անհրաժեշտ կլինի նպաստ ստանալու իրավունակությունը հաստատող տեղեկատվություն տրամադրել EDD-ին նպաստների վճարումներ ստանալու համար: Այս երկշաբաթյա գործընթացը հայտնի է որպես շարունակական նպաստների հաստատում: Նպաստների հայցն ավելի արագ ժամկետներում մշակելու համար օգտվեք UI Online<sup>SM</sup>-ից\*:

Որպես հավելյալ հարմարավետություն՝ UI Online Mobile<sup>SM</sup> ծառայություն է տրամադրվում սմարթֆոն և պլանշետ օգտագործողներին:

Որպեսզի գրանցվեք UI Online<sup>SM</sup> հաշվի համար, այցելեք [www.edd.ca.gov/UI\\_Online](http://www.edd.ca.gov/UI_Online) կայքէջը: Անհրաժեշտ կլինի մուտքագրել Ձեր սոցիալական ապահովության քարտի համարը (SSN), ծննդյան թվականը, անձնական էլեկտրոնային փոստի հասցեն և ստորև տրված Ձեր EDD-ի Հաճախորդի հաշվեհամարը: EDD-ն շատ լրջորեն է վերաբերվում գաղտնի տեղեկությունների անվտանգության հարցին: Խնդրում ենք ոչ մեկին չհայտնել Ձեր EDD-ի Հաճախորդի հաշվեհամարը:

### Ձեր EDD-ի Հաճախորդի հաշվեհամարն է՝

XXXXXX

### Օգտագործեք Ձեր EDD-ի Հաճախորդի հաշվեհամարը՝ UI Online<sup>SM</sup> համակարգում այսօր գրանցվելու համար:

Եթե արդեն SDI Online հաշիվ ունեք հաշմանդամության ապահովագրության (DI) կամ վճարովի ընտանեկան արձակուրդի նախորդ հայցի հիման վրա, ապա պետք է նույն օգտանունն ու գաղտնաբառն օգտագործեք UI Online<sup>SM</sup> ծառայությանը գրանցվելու համար: Գրանցվելիս ընտրեք «Գրանցվել SDI մուտքի տվյալներով» («Register with SDI Login») կոճակը՝ UI Online<sup>SM</sup>-ում գրանցման գործընթացն արագացնելու համար:

UI Online<sup>SM</sup>-ի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար ծանոթացեք կից տրված գովազդաթերթիկին կամ դիտեք UI Online<sup>SM</sup>-ի մասին մեր տեսաձեռնարկներից որևէ մեկը [www.edd.ca.gov/UI\\_Online](http://www.edd.ca.gov/UI_Online) կայքէջում:

## Մի հապաղեք: Գրանցվեք այսօր և օգտվեք UI Online<sup>SM</sup>-ի բազմաթիվ առավելություններից ու հարմարություններից:

\* Մասնակի կամ Աշխատանքի բաշխման ծրագրերին մասնակցող հայցվորներն այս անգամ չեն կարող հաստատել իրենց իրավունակությունը նպաստների համար կամ UI Online<sup>SM</sup>-ի միջոցով վերաբացել գոյություն ունեցող հայցը, բայց կարող են օգտվել համակարգի բոլոր մյուս գործառնական հնարավորություններից: